«ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ»՝
ՈՐՊԵՍ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԲԱԼԱՍԱՆՅԱՆ Ս. Ա.

Հասարակությունը կայանում է հաղորդակցական գործընթացների միջոցով [*], որոնք կարելի է տարբերակել ըստ այն սոցիալական ոլորտի, որում դրանք գոյություն ունեն: Հասարակության կրթական ոլորտում առկա հաղորդակցական իրականությունը միտված է գիտելիքի փոխանցելիությանը: Անշուշտ, գիտելիքը բազմիմաստ է. հասարակության կրթական ոլորտում փոխանցվում է կրթական գիտելիք, գիտական գիտելիք[1], սակայն սոցիոլոգիական տեսանկյունից էական է կրթության ոլորտում փոխանցվող սոցիալականացված գիտելիքը [*]: Յուրաքանչյուր տիպի գիտելիքի պարագայում կարելի է խոսել վերջինիս առաջնային նախանշվածության մասին. կարելի է առանձնապես խոսել տարրական կրթության, հանրակրթության, բարձրագույն և հետբուհական կրթության, գիտակրթական և գիտական գիտելիքի առկայության հիմնական նպատակների շուրջ, սակայն սոցիոլոգիական տեսանկյունից հետաքրքիր է այն գիտելիքը, որը հասարակության գոյության նախապայմանն է:

Հասարակության մեջ կրթական և գիտական հաստատությունների գործունեությունը կարելի է սոցիոլոգիական ուսումնասիրության ենթարկել այնքանով, որքանով որ վերջիններս նպաստում են սոցիալականի վերարտադրմանը: Միևնույն ժամանակ սոցիալականը չի կարող վերարտադրվել միայն կրթական և գիտական հաստատությունների միջոցով, քանի որ հասարակական ամբողջի մեջ տեղի ունեցող կրթական գործընթացները ինչպես կրթական և գիտական հաստատությունների տիրույթում, այնպես էլ դրանց տիրույթից դուրս են: Սոցիոլոգիական տեսանկյունից ակնհայտ է, որ թե՛ կրթական գիտելիքը, թե՛ գիտական գիտելիքը, թե՛ սոցիալականացված գիտելիքը փոխկապված են, քանի որ այսպես թե այնպես ձևավորում են սոցիալականը, ձևավորվում են սոցիալապես և փոխպայմանավորող են: Կրթական գիտելիքն անխուսափելիորեն ներառում է գիտականը, գիտական գիտելիքը՝ կրթականը, գիտական և կրթական գիտելիքները սոցիալականացված են: Այսպիսով,

---

[*] *Արդի սոցիոլոգիական տեսություններում օբյեկտիվ և սուբյեկտիվ սոցիալական իրականությունները մեկտեղող հաղորդակցական իրականության մասին տե՛ս* **Johnson D. P.** *Contemporary Sociological Theory: an Integrated Multi-level Approach, Springer, 2008, p. 8-13, 137-193.*

[1] *Տե՛ս* **Шелер М.** *Формы знания и общество (Социологический журнал, 1996, N 1/2, с. 137-139).*

[*] *«Սոցիալականացված գիտելիք» հասկացությունն այստեղ կարելի է փոխարինել նաև «առօրյա գիտելիք» հասկացությամբ: «Սոցիալականացված գիտելիք» հասկացության շուրջ տե՛ս* **Шюц А.** *Избранное. Мир, светящийся смыслом (пер. с нем. и англ., М., 2004);* **Бергер П., Лукман Т.** *Социальное конструирование реальности. Трактат по социологии знания, М., 1995. «Առօրյա գիտելիք» հասկացության մասին տե՛ս* **Манхейм К.** *Идеология и утопия. Диагноз нашего времени, М., 1994:*

սոցիոլոգիայի շրջանակներում անիմաստ է առանձին-առանձին խոսել կրթական, գիտական և սոցիալականացված գիտելիքների մասին այնքան ժամանակ, քանի դեռ հիմնավորված չէ, թե դրանք ինչպես են փոխկապվում՝ դրանով իսկ նպաստելով հասարակության՝ որպես մեկ ամբողջի առկայությանն ու վերարտադրությանը:

Հասարակության մեջ նախադպրոցական հաստատություններում ուսուցանում են մանկավարժները, ուսանում են երեխաները, հանրակրթական հաստատություններում՝ ուսուցիչները, աշակերտնե-րը, բուհերում՝ դասախոսները, ուսանողները: Հետբուհական հաստատություններում նախկին ուսանողները հավակնում են գիտական աստիճանների, արվում են գիտական հայտնագործություններ, ձևավորվում են գիտական դպրոցներ, ընտանիքում դաստիարակվում և սոցիալականացվում են (հետևաբար՝ կրթվում) երեխաները, ԶԼՄ-ն հասարակական կրթության միջոց է[2] և այլն: Այստեղ սոցիոլոգիական աշխարհայեցողությամբ հնարավոր է ընդգծել, որ հասարակությունը նման է «դասարանի», որտեղ բոլոր անհատներին հնարավոր է բնորոշել որպես կրթողների՝ դասավանդողների, և կրթվողների՝ դասավանդվողների: Ընդ որում, այստեղ էականն այն չէ, թե հասարակության մեջ ով և որտեղ է դասավանդում և/կամ դասավանդվում: Այստեղ էական է այն, որ կրթությունը սոցիալական ինստիտուտ է, որը գոյություն ունի հասարակության մեջ՝ հասարակությունը վերարտադրելով դասավանդողների և դասավանդվողների սոցիալական խմբերի միջոցով, հաղորդակցությամբ, որն արտահայտում է հատկապես սոցիալական դասավանդություն: Այլապես կրթությունը սոցիոլոգիայի շրջանակներում անհնարին կլիներ դիտարկել որպես անհատներին սոցիալական դերակատարմանը պատրաստող, հասարակության մշակութային առանձնահատկությունները վերարտադրող (Տ. Պարսոնս), սոցիալական համերաշխությունը, հասարակության սոցիալ-բարոյական առանձնահատկություններ, հասարակության մեջ աշխատանքի բաժանման սոցիալական միջոցներն ու հնարավորությունները ստեղծող ու վերստեղծող, դրանք սերնդեսերունդ փոխանցող սոցիալական համակարգ (Էմ. Դյուրկհեյմ), սոցիալական դասակարգերի ստեղծման ու առկայության նախապայման (Կ. Մարքս), մանկավարժական քննախոսության (դիսկուրսի) միջոցով սիմվոլիկ վերահսկողության առաջնային գործոն (Բ. Բերնշտեյն), սոցիալական կապիտալ ու*

---

* *«Կրթություն», «սոցիալականացում», «դաստիարակություն» հասկացություններն առանձին-առանձին հնարավոր է երկար քննարկել, սակայն այս հասկացությունների փոխկապվածությունն անժխտելի է: Տե՛ս, օրինակ,* **Дюркгейм Э.** *Педагогика и социология, М., 1995;* **Голованова Н. Ф.** *Социализация и воспитание ребенка, СПб., 2004;* **Спенсер Г.** *Статьи о воспитании, СПб., 1914.*

[2] *Տե՛ս* **Գրիգոր Արծրունու** *աշխատությունները 1865-1871 թ., Թիֆլիս, 1904:*

հասարակական ճաշակ ձևավորող (Պ. Բուրդյե) և այլն[3]: Ելնելով կրթության սոցիոլոգիական սահմանումներից՝ «դասավանդում» հասկացությունը կարելի է բնորոշել երկու հիմնական իմաստով՝ սոցիալապես ընկալելի (այն իմաստով, որը բնորոշում է «դասավանդում» հասկացությունն այնպես, ինչպես այն հասկանալի է հասարակության մեջ՝ անհատների համար, կրթական, գիտական հաստատություններում և այլն) և սոցիոլոգի կողմից դիտարկելի (այն իմաստով, որը ներկայացվում է սույն հոդվածի շրջանակներում):

*Պարզ է, որ անհատները սովորում ու սովորեցնում են հասարակության մեջ: Եթե ընդունում ենք, որ սովորել նշանակում է կրթվել՝ հասկանալ շրջապատող աշխարհը և հասկացածին համապատասխան՝ լինել սոցիալական աշխարհում, ապա պարզ է, որ կրրթությունը անհատական կենսագործունեության միջոց է և վերագրելի է բոլոր անհատներին սոցիալական տարածության և ժամանակի յուրաքանչյուր դրսևորման պարագայում: Այլ հարց է, որ անհատներից շատերը սա կարող են չգիտակցել՝ իրենց և այլոց չհամարելով դասավանդողներ և/կամ դասավանդվողներ: Այնուամենայնիվ, հասարակության մեջ ընկալելի են «ինձ մի՛ սովորեցրու», «վատ/լավ ես սովորել», «գլխիս դասախոսություն (հաճախ, ռուս.՝ лекция) մի՛ կարդա», «կյանքի դասեր», «ինձ համար լավ դաս եղավ», «մի լավ դաս տվեց/տվեցի», «ես լավ ուսուցիչ եմ ունեցել/ունեմ» արտահայտությունները, որոնք վերագրելի են հասարակությանը որպես, փաստորեն, «դասարանի»: Ավելին, որպես դասավանդող, դասավանդվող հասարակության մեջ կարելի է դիտարկել ոչ միայն անհատներին, այլև իրերի դրվածքը * և սոցիալական գործողությունները, սոցիալական իրավիճակները, սոցիալական իրականությունը (ֆենոմենները)՝ իրերի և երևույթների աշխարհը: Եթե սոցիոլոգիական գիտական հանրության շրջանակում ընդունելի է «սովորող հասարակություն»* հասկացությունը, ապա հնարավոր է նաև «դասավանդող հասարակություն» հասկացության առաջադրումը:*

Սոցիոլոգիայի առանձնահատկություններից է այն, որ սոցիալական իրականության յուրաքանչյուր ուսումնասիրություն պահանջում է այդ իրականությունն արտահայտող գիտական հասկացությունների իմաստավորում, սահմանում և վերասահմանում: Այսպես, սերունդները կրթության միջոցով, հասարակության մեջ հասարակական բնույթ ու նշանակություն ունեցող կրթական

---

[3] *Տե՛ս* **Smith P. D.** *Cultural Theory: An Introduction, Willey-Blackwell, 2001, p. 22-37;* **Дюркгейм Э.** *Социология, М., 1995;* **Маркс К., Энгельс Ф.** *Соч., т. 1, М., 1995,с. 103, 447;* **Berstein B.** *Pedagogy, Symblic Control, and Identity: Theory, Research, Critique, Lanham MD, 2000;* **Bourdieu P., Passeron J. C.** *La Reproduction, Sage in Association with Theory, Culture & Society, Dept. of Administrative and Social Studies, Teesside Polytechnic, London, 1990;* **Gewirtz S., Gribb A.** *Understanding Education: A Sociological Perspective, Cambridge, 2009, p. 57-82.*

* *Տե՛ս* **Կանտ Ի.**, *Պրոլեգոմեններ, Ե., 2000, էջ 29, 104-110:*

* *«Սովորող» հասարակության մասին մանրամասն տե՛ս* **Raggatt P.** *The Learning Society: Challenges and Trends, Routledge, 1996. Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ այս հասկացության իմաստը գրեթե չի փոխվի, եթե կիրառվի «դասավանդվող հասարակություն» հասկացությունը:*

առօրյայում մշտապես առկա դասավանդմամբ (ոչ միայն կրթական հաստատություններում, այլև ողջ հասարակության մեջ) միմյանց են փոխանցում աշխարհաճանաչողության ու կենսագործունեության հնարավորությունները՝ նաև ու հատկապես սոցիալական դասերը, որոնք փոխանցելի են ինչպես կրթական, այնպես էլ գիտական և հատկապես սոցիալականացված գիտելիքի (արդեն գիտելիքի՝ ոչ գիտելիքների) շրջանակում:

Կրթությունը սոցիոլոգիայի շրջանակում չի կարող չդիտարկվել որպես սոցիալական իրականության մեջ մշտապես գոյություն ունեցող տարր, իսկ եթե կրթությունը սոցիալական իրականության այսպիսի տարր է, ապա դասավանդումը կրթության սոցիալական բնույթն ու նշանակությունը պայմանավորող, հասարակությունը հնարավոր դարձնող էական սոցիալական հաղորդակցություն է: Այլ հարց է, որ դասավանդումը, այս իմաստով, սոցիալապես չի գիտակցվում, որը սոցիոլոգիայում թույլ է տալիս ընդգծել այն հիմնական հանգամանքը, որ դասավանդումը կրթական հաստատություններում սոցիոլոգի կողմից դիտարկելի, սակայն սոցիալապես բազմիցս չընկալվող դասավանդման տարատեսակ է, որը գոյություն ունի հասարակության մեջ դասավանդման այլ սոցիալական դրսևորումների հետ[4]: Սա է, որ թույլ է տալիս «դասավանդումն» առա-ջադրել նաև որպես հիմնական սոցիոլոգիական հասկացություն, որի սոցիոլոգիական հետազոտության հնարավորություններն ու առանձնահատկությունները կանխորոշում են հասարակության մեջ կրթության հետազոտման հնարավորություններն ու առանձնահատկությունները:

Եթե կրթությունը սահմանում ենք որպես դասավանդման միջոցով հասարակայնորեն կարևոր գիտելիքի արտադրմանը և վերարտադրմանը միտված սոցիալական միավոր և/կամ գործընթաց, և եթե այս սահմանումը չի հակասում կրթության սոցիոլոգիայում ընդունելի կրթության սոցիոլոգիական տեսություններին (այն չի հակասում[5]), ապա դասավանդումը կրթության սոցիոլոգիայի օբյեկտ կարելի է համարել այնքանով, որքանով որ կրթությունն է սահմանելի որպես այդպիսին: Դասավանդումը՝ արդեն վերը ներկայացված և սոցիոլոգիական իմաստով:

Անդրադառնանք կրթության սոցիոլոգիական վերլուծության համար էական հարցին՝ ով/ինչն է ապահովում կրթության միջոցով հասարակայնորեն կարևոր գիտելիքի փոխանցելիությունը և կրթության ինստիտուցիոնալացումը հատկապես հասարակության մեջ: Անհատների համընդհանրությունը հասարակության մեջ գիտակցական գործունեությամբ վերարտադրում է հասարակության առանձին անհատների գիտակցական գործունեությունը հնարավոր դարձնող

---

[4] *Տե՛ս* **Է. Դյուրկհեյմի** *«Դաստիարակությունը, դրա բնույթը և դերը» հոդվածը "Воспитание, его природа и роль"* (**Дюркгейм Э.** *Социология образования) (под ред. В. С. Собкина и В. Я. Нечаева. Пер. с франц. М., 1996).*

[5] **Gewirtz S., Gribb A.** *նշվ. աշխ., էջ 3-85:*

հասարակական պայմաններ: Սա հասարակության մեջ անհատներին դրդում է ոչ միայն հասարակական ամբողջի մի շարք դրսևորումներ ընկալելու, այլև դրանցից մի որոշ մաս էլ անտեսելու, չնկատելու, չգիտակցելու: Հասարակության մեջ կենսագործունեություն ծավալող անհատների բոլոր գործողությունների հետևանքները այլ կլինեին, եթե նրանք այլ կերպ գործեին, քան նպատակահարմար են գտնում կամ ուղղակի կարողանում են՝ գործել (սոցիալական հնարավորություններ կան)[6]: Հասարակության մեջ գոյություն ունեցող ինստիտուցիոնալ գործընթացները խոր արմատացած են սոցիալական ժամանակի ու տարածության մեջ՝ պայմանավորված լինելով անհատական գործողություններով ու պայմանավորելով դրանք և դրանց հետևանքները[7]: Սոցիալական ինստիտուտները հասարակության մեջ տարածաժամանակային առումով առավելագույնս արմատացած սոցիալական պրակտիկաների արտահայտումներ են: Սոցիալական նորմերը, արժեքները, օրենքները ազդում են հաղորդակցությունների՝ այստեղ՝ դասավանդման (սոցիալական հաղորդակցության էական տարատեսակի), ձևավորման և հասարակական ընկալման վրա:

Գիտելիքը սոցիալական գոյության էական պահ է[8]: Իմացողը հենց այնպես չի ստեղծում իր կողմից գիտակցվող սոցիալական իրականություն, այլ ազդվում է այն ամենից, ինչը ճանաչում է, և ինչն իր համար ճանաչելի է: Միևնույն ժամանակ, միշտ կա ինչ-որ բան, որը նա իմանում է՝ ելնելով սոցիալական անհրաժեշտությունից, պահպանելով իր անձի գոյության ինստիտուցիոնալ կարգը՝ նպաստելով հասարակության ինստիտուցիոնալ կարգի պահպանմանը:

Վստահ լինելով, որ իր գործողությամբ ուզում է ինչ-որ բան արտահայտել՝ հասարակության յուրաքանչյուր անհատ փորձում է այդ գործողության մեջ գտնել և դրանով արտահայտել այն իմաստը, որը այդ գործողությունն ունի ոչ միայն իր, այլև բոլոր այլ անհատների համար: Անհատները միասին են գործում սոցիալական աշխարհում, և մինչև չի ապացուցված հակառակը, նրանցից յուրաքանչյուրը կարծում է, որ այն իմաստը, որը ինքը ներդնում է իր գործողության մեջ, և այն իմաստը, որը այդ գործողությունն ունի այլոց համար, նույնական են[9]: Այսպես են իրականացվում նաև բոլոր այն սոցիալական գործողությունները, որոնցով հնարավոր է դառնում դասավանդման սոցիալական հաղորդակցությունը, որը տարբեր ժամանակների հասարակություններում ունի իր ուրույն դրսևորումները, պայմանավորում է հասարակության մեջ փոխանցվող ու ստացվող, սոցիալապես ընկալելի և/կամ անընկալելի սոցիալական դասերը (վերջիններիս փոխանցման և ստացման առանձնահատկությունները) և պայմանավորվում դրանցով:

---

[6] *Նույն տեղում, էջ 41-45:*

[7] **Giddens A.** *The Constitution of Society: Outline of the Theory of Structuration (University of California Press, 1986, p. 16-28).*

[8] *Տե՛ս* **Шелер М.** *նշվ. աշխ.:*

[9] **Giddens A.** *նշվ. աշխ., էջ 112:*

Նկարագրված գործընթացի բնույթն էլ, իր հերթին, որոշակի է դարձնում այն, թե հասարակության մեջ ով/ինչ կարող է ընկալելի լինել կամ չընկալվել որպես դասավանդող և դասավանդվող: Դասավանդման սոցիալական ընկալումը և դասավանդման՝ որպես սոցիալական հաղորդակցություն դրսևորվելու առանձնահատկությունները այն հիմնական պահերն են, որոնց դիտարկմամբ անհրաժեշտաբար կարող է սկսվել ու ավարտվել կրթության սոցիոլոգիական հետազոտությունը:

Ամփոփելով նշենք, որ սոցիալական ինստիտուտներն ունեն հասարակության մնայուն հիմնախնդիրների անընդհատ ու հիմնավոր լուծման նշանակություն: Հասարակության կրթության ինստիտուտի պարագայում այս նշանակության սոցիալական արդարացումն ամփոփված է հասարակայնորեն կարևոր գիտելիքի արտադրման և վերարտադրման գործընթացներում: Կրթության ինստիտուտը սոցիալապես ընկալելի և սոցիոլոգի կողմից դիտարկելի դասավանդումների ամբողջություն է, իսկ «դասավանդումը», ըստ այդմ, նաև հիմնական սոցիոլոգիական հասկացություն է, որն ապահովում և արտահայտում է համընդհանուր սոցիալական իրականության մեջ կրթական տարրի գոյության հաղորդակցական բնույթն ու նշանակությունը:

“ПРЕПОДАВАНИЕ” КАК СОЦИОЛОГИЧЕСКОЕ ПОНЯТИЕ

БАЛАСАНЯН С. А.

Резюме

С точки зрения социологии “преподавание” может рассматриваться как социальная коммуникация, которая направлена на воспроизводство образования и общества. Разумеется, без необходимой для образования коммуникации, без преподавания образовательная реальность не была бы переплетена с социальной. Следовательно, преподавание, в социологическом аспекте, может считаться процессом обучения социальным урокам.